

### ՎԱՀՐԱՄ ԹԱՄԱԶՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի իրավաբանական ֆակուլտետի, միջազգային և եվրոպական իրավունքի ամբիոնի հայցորդ



## ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ԳԼՈՒԲԱԼ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ներկայումս ազգերի ինքնորոշման հարցը բնավ էլ չի անցել անցյալի դոկտրինների հիշողությունների շրջանը: Առավել ևս, այս հարցը ոչ այնքան տեսական է, որքան գործնական, քանի որ նրա վրա է հիմնվում քաղաքականությունը, փորձելով գտնել արդար որոշումներ, որոնց բացակայությունը բերում է մի ամբողջ ազգի անթիվ զոհերի և բազում արհավիրքների:

Շատ դեպքերում բախում է գնում «փոքր կայսերական մտածելակերպի», ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացման հնարավորությամբ, որն էլ կոչ է արված ՄԱԿ-ի Կանոնադրությամբ (հոդ.1, կ.2)<sup>1</sup> և ամրագրված է Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966 թվականի միջազգային դաշնագրում «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք: Այդ իրավունքի ուժով նրանք ազատորեն սահմանում են իրենց քաղաքական կարգավիճակը և ազատորեն ապահովում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը: (հոդ.1, կ.1)<sup>2</sup>: Պետությունները, որոնք ստորագրել են Եվրոպայում Անվտանգության եւ Համագործակցության Խորհրդաժողովի Հելսինկյան եզրափակիչ ակտը (1975թ.), պարտավորվել են հարգել «ազգերի՝ իրենց ճակատագիրը տնօրինելու իրավունքը», հաստատելով, որ «բոլոր ազգերը միշտ իրավունք ունեն լիիրավ ազատության պայմաններում որոշել, երբ և ինչպես ցանկանում են, իրենց ներքին և արտաքին քաղաքական կարգավիճակը առանց դրսի միջամտության և իրականացնել իրենց հայեցողությամբ իրենց քաղաքական, տնտեսական և մշակութային զարգացումը»: (կ.VIII)<sup>3</sup>

Վերջին տարիներում ռուսական քաղաքական և գիտա քաղաքական շրջանակներում նկատվում է միտում՝ թաղելու ազգերի ինքնորոշման իրավունքը: Եվ դա արվում է տարածքային ամբողջականության սկզբունքի հաղթանակի և համակողմանիության համար: Այսպես, ռուս քաղաքական գործիչ Ռամզան Աբդուլատիպովը հայտարարեց,

թե, թե ՄԱԿ-ի կանոնադրությունում իբր ասվում է, որ ազգերի ինքնորոշումը «չպետք է խախտի պետության տարածքային ամբողջականությունը»<sup>4</sup>: Բայց ՄԱԿ-ի կանոնադրությունում խոսք չկա «տարածքային ամբողջականություն» հասկացության մասին, այնտեղ խոսվում է «տարածքային անձեռնմխելիության» մասին, և այն կապված է ոչ այնքան ազգերի ինքնորոշման, որքան պետությունների միջև ուժ չգործադրելու հետ: Խորապես սխալվում են նաև նրանք, ովքեր պնդում են, թե ժամանակակից միջազգային իրավունքի նորմերով «հստակ ասված է, որ տարածքային ամբողջականությունը և պետության քաղաքական միասնությունը չի կարող կասկածի տակ առնվել անգամ ազգերի ինքնորոշման իրավունքով»<sup>5</sup>: Հատուկ հետևողականությամբ և համառությամբ գիտնական-ազգաբան Վ.Տիշկովը երկար տարիների ընթացքում խորտակում է ազգերի ինքնորոշման իրավունքը: Նա առաջարկում է հրաժարվել «ազգ» հասկացությունից: Արդյունքում նա բացահայտեց, որ «ազգերի ինքնորոշման իրավունք» հասկացությունն ույնպես չկա, որ դա բացառապես «մեր սոցիալիստական աղճատումն է», և կա «ինքնորոշման իրավունք», որը «հավասարազոր չէ էթնիկ խմբի հասկացությանը»<sup>6</sup>: Կարելի է մտածել, թե ազգերի հասկացությունը հավասարազոր է էթնիկ խմբի հասկացությանը և իր հիմքում չի հասկացվում որպես ազգ, որն էլ Վ.Կյուչեվսկու ձևակերպմամբ դառնում է պետություն<sup>7</sup>: Պետք է նկատել, որ հիմնական եվրոպական լեզուներում «ազգ» և «պետություն» հասկացությունները գրեթե հոմանիշներ են, որը նույնպես ընդունում է Վ. Տիշկովը: Փաթաթելով ազգին ձևակերպում, ինչպես՝ «տոհմ, միայն բանակով», նա իրականում հռչակում է անհեթեթություն, որը չի համապատասխանում ոչ մի իրականության և հակասության մեջ է ընկնում ինքն իր հետ:

Մեկ ուրիշ, ոչ պակաս կարևոր հանգամանք «ազգ» հասկացության հետ կապված, որը

սերտորեն առնչվում է տարածքի խնդրի հետ, հանդիսանում է այն, որ ինքնորոշվող սուբյեկտի տակ ենթադրվում են ոչ թե ինչ-որ քանակությամբ անհատներ կամ նրանց հանրագումար որոշակի տարածքում, այլ նրանց հաստատուն ընդհանրությունը՝ ընդհանուր բնորոշումներով: Եվ պետք է համաձայնել Ռ. Մյուլլերսոնի հետ, որը գրում է, որ ինքնորոշման ժամանակ խոսքը գնում է հենց ազգի մասին, այլ ոչ թե բնակչության: Անգամ եթե ասենք, որ Մոսկվա քաղաքի Օկոտյաբորսկի շրջանում ավելի շատ բնակիչ կա, քան Լեռնային Ղարաբաղում, միևնույն է, ինքնորոշվելու իրավունք ունի Լեռնային Ղարաբաղի ժողովուրդը, այլ ոչ թե մարդիկ, որոնք ունեն մշտական գրանցում՝ մայրաքաղաքի շրջանում: Ժողովրդի հիմքում, որպես ինքնորոշման սուբյեկտ, ընկած է ազգը կամ մի այլ էթնիկ համայնք, որով նույնականացվում է տվյալ տարածքը<sup>8</sup>:

Եվ ինչպես նշում է Վիգեն Քոչարյանը, ընդհանուր առմամբ ինքնորոշվող սուբյեկտի մասին գոյություն ունեցող բոլոր ձևակերպումները մեզ տալիս են ընդհանուր, բայց միանգամայն որոշակի պատկերացում նրա մասին, թե ինչ է նկատի առնվում համապատասխան միջազգային-իրավական ակտերում «ազգ» հասկացության տակ<sup>9</sup>:

Ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի ուժով, որը ամրագրված է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունում<sup>10</sup>, բոլոր ժողովուրդները իրավունք ունեն ազատ որոշելու՝ առանց դրսի միջամտության, իրենց քաղաքական կարգավիճակը և իրականացնելու իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը և բոլոր պետությունները պարտավոր են հարգել այդ իրավունքը՝ համաձայն կանոնադրության դրույթների<sup>11</sup>:

Յուրաքանչյուր պետություն պարտավոր է օժանդակել միասնական և անհատական գործողություններով ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի իրականացմանը՝ համաձայն կանոնադրության դրույթների և կանոնադրությամբ իր վրա դրված պարտականությունները կատարելիս ցուցաբերել օգնություն Միավորված ազգերի կազմակերպությանը, սույն սկզբունքը իրականացնելու նպատակով, որպեսզի՝

ա. նպաստել բարեկամական հարաբերություններին և պետությունների միջև համագործակցությանը և

բ. անհապաղ վերջ դնել գաղութացմանը, ցուցաբերելով պատշաճ հարգանք շահագրգիռ ժո-

ղովուրդների ազատ արտահայտված կամքին, նաև նկատի ունենալով, որ ժողովրդի հպատակեցումը օտար լծին, իշխելը և շահագործումը հանդիսանում է սույն սկզբունքի խախտում, նույնն է, թե ժխտել հիմնական մարդու իրավունքները, և հակասում է Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությանը:

Յուրաքանչյուր պետություն միասնական և անհատական գործողությունների միջոցով պարտավոր է օժանդակել մարդու իրավունքների և հիմնական ազատությունների համընդհանուր հարգմանը և պահպանմանը՝ համաձայն կանոնադրության դրույթների:

ՄԱԿ-ի փաստաթղթերում արտահայտված է ինքնորոշման սկզբունքի նորմատիվային գլխավոր բովանդակությունը: Այսպես, Միջազգային իրավունքի սկզբունքների մասին հռչակագրում ընդգծվում է. «Ինքնիշխան և անկախ պետության ստեղծումը, անկախ պետությանը միանալը կամ նրա հետ միավորվելը, կամ ժողովրդի կողմից ազատորեն որոշված ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի սահմանումը՝ այդ ժողովրդի կողմից ինքնորոշման իրավունքի իրականացման ձևերն են»<sup>12</sup>:

Բազմազգ պետության տարածքային ամբողջականությունը չի կարող իրապես երաշխավորվել ո՛չ կախարդանքով, ո՛չ անգամ միջազգային ճանաչմամբ՝ հատկապես այն պատճառով, որ այն կարող է պայթել ներսից՝ բնակչության մի մասում, այլազգի ու օտար բոլոր չափանիշներով և որը որոշել է օգտվել իր բնական իրավունքից՝ գործող միջազգային նորմերով ճանաչված:

Ինչպես թվում է որոշ քաղաքագետներին, մեր դարաշրջանին բնավ էլ հատուկ չէ «համընդհանուր ինտեգրացումը»: Ինտեգրացման ընթացքը չի կրում ընդհանուր բնույթ, որովհետև այն նկատվում է միայն Արևմտյան Եվրոպայում: Մեր դարաշրջանին հատուկ է մի ուրիշ ընթացք՝ ժողովուրդների ազգային ամրապնդման ընթացքը, որը գոյություն ունի վաղուց ձևավորված «ազգ-պետություններում»: Ի դեպ, հենց այդ գործընթացն է խոչընդոտում ինտեգրմանը՝ նրա առջև դնելով միանգամայն որոշակի սահմանափակումներ. ազգային-պետական միավորները չեն ցանկանում ձուլվել Եվրոպական հանրության՝ արդեն Եվրոպական միության ազգային կազմություններում, որոնք փորձում են մեզ օրինակ ծառայեցնել «տարածքային ամբողջականության» պահապան-ջատագովները՝ շտապելով հասնել ազգամիջյան հարաբե-

## ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

րությունների պետության երկատմանը և ազգային պետականության փոխարինմանը «ազգային-մշակութային սկզբունքով»:

Ուստի հարկ է նշել, որի մասին վերը ասված է՝ շարադրված սույն սկզբունքում, որ յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ ժողովուրդներին ինքնորոշելու, ազատության և անկախության իրենց իրավունքից զրկելու ցանկացած բռնի գործողություններից: Այդ ժողովուրդները նման բռնի գործողությունների դեմ պայքարելու և դիմադրություն ցուցաբերելու նպատակով, իրենց ինքնորոշման իրավունքի իրականացման կարգում, իրավունք ունեն ձեռք բերելու օժանդակություն և ստանալ այն՝ համաձայն ՄԱԿ-ի կանոնադրության նպատակների և սկզբունքների<sup>13</sup>: Բազմազգ պետություններում «մշակութային ինքնավարությանը» զրկելով գրից և այլ տարրերից, տարածքային ամբողջականությունը կարող է պահպանվել կրակով և սրով: Այնուամենայնիվ այն ոչ միայն անմարդկային է, այլև ոչ ռացիոնալ, թեկուզև այն պատճառով, որ ոչ հաստատուն է և ոչ էլ երկարաժամկետ:

Յուրաքանչյուր պետության ինքնիշխան իրավունքն է ճանաչել այլ պետությանը, սակայն որոշները կսահմանափակելին ինքնորոշման իրավունքի արդյունքում պետության առաջանալը: Չի պարունակում այն նաև նորմեր՝ նորակազմ պետության ճանաչմանը արգելող, եթե վերջինս անջատվում է ուրիշ պետությունից, չնայած նրա անհամաձայնությանը: Յուրաքանչյուր միջամտություն որևէ պետության կողմից ուրիշ երկրի ինքնորոշման գործընթացին, առավել ևս զավթելը կամ ինքնորոշվող տարածքի ձեռքբերումը (ամբողջովին կամ մասնակի) հանդիսանում է միջազգային իրավունքի խախտում: Օրինակ, Թուրքիան ճանաչել է Կիպրոսի Հանրապետությունից անջատված՝ այսպես կոչված Հյուսիսային Կիպրոսի հանրապետությանը: Ինքնըստիներյան ճանաչումը կհամարվեր օրինական, սակայն հակաօրինական էր թուրքական գործի մուտք գործելը Կիպրոս, որոնք 1983 թվականին ապահովեցին անջատողական պետականակերպ նորակազմության առաջանալուն, որով խախտվեց և վնասվեց հենց ինքնորոշման օրինաչափ իրավունքը: Մի ուրիշ օրինակ. Վաշինգտոնի կողմից Թայվանի դեֆակտո ճանաչումը, համաձայնեցվածությունը այդ նորակազմության հետ՝ ակտիվ ռազմական աջակցությամբ: Նաև Սերբիայից Կոսովոյի առանձնանալը, որը միանգամայն ինքնուրույն ակցիա չէր, քանի որ ու-

ղեկավարող զորքից ռազմական միջամտությամբ, այդ թվում՝ ուղղակի ագրեսիայով:

Քանի անգամ պետք է ճանաչվի ժողովուրդների ինքնորոշման իրավունքը, որպեսզի այդ իրավունքը համարվի ճանաչված:

Հարցը առաջանում է Արցախի «Լեռնային Ղարաբաղի» ժողովրդի ինքնորոշման հետ կապված, քանի որ այն բազմիցս ճանաչվել է: Բաքուն ճանաչել է այդ իրավունքը դեռևս 1920 թվականին՝ Հայաստանում Խորհրդային իշխանության հաստատման հետ կապված Հռչակագրով<sup>14</sup>: Այնուհետև նա ճանաչել է այդ իրավունքը 1990 թվականին՝ կողմ քվեարկելով Խորհրդային միության օրենքի ընդունման ժամանակ «Սովետական միության կազմից միութենական պետության դուրս գալու հետ կապված հարցերի կարգավորման մասին»: Այս օրենքին կողմ են քվեարկել բոլոր խորհրդային պետությունները, այդ թվում՝ Խորհրդային միության իրավահաջորդը՝ Ռուսաստանի Դաշնությունը: ԱՄՆ-ը հաստատեց իր դրական վերաբերմունքը Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի նկատմամբ 1989 թվականին, երբ Սենատի և Կոնգրեսի հատուկ բանաձևերով հորդորում էին խորհրդային իշխանությանը գտնել խնդրի որևէ լուծում, «որը իսկապես կարտացոլի այդ շրջանի ժողովրդի հայացքները»: Վերջապես 1991 թվականին, հարգելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը, Հայաստանը վերանայեց այդ վեճի լուծման բանալին, երբ հռչակեց անկախություն Խորհրդային Հայաստանի սահմաններում: Այսպիսով դադարեցվեցին վերամիավորման գործողությունները՝ համաձայն ԼՂ-ի և ՀՀ-ի բարձրագույն իշխանությունների 1989 թվականի դեկտեմբերի 1-ի համատեղ վճռի:

Բայց որքան շուտ և երբ ինքնորոշումը փաստացի և օրինաչափորեն իրականանում է այս կամ այն պետության սահմաններում, մնացյալ պետությունները ազատ են իրենց որոշման մեջ, ճանաչել (այդ թվում, հնարավոր է, դիվանագիտական ճանապարհով) նորակազմ պետությանը: Գնահատումը ունի իր աստիճանավորումը. տարբերակում են դեյուրե և դեֆակտո ճանաչում, ճանաչում վերապահումներով, ազգերի ճանաչում՝ իրենց անկախության համար պայքարող, մարտնչող կողմի ճանաչում և այլն: Դեֆակտո ճանաչումը կարող է լինել ոչ միայն ֆորմալ, այլև ենթադրվող, մասնավորապես՝ արտահայտվելով երկկողմանի պայմանագրի կնքումով, օրինակ՝ երկու պետությունների

միջև բազմակողմ հարաբերություններ սահմանող առևտրատնտեսական կապերի մասին:

Ճանաչման ձևերը և աստիճանները որոշվում են իրական քաղաքականության պահանջարկով, որը հստակ դրսևորվեց, օրինակ, տարբեր պետությունների կողմից Պաղեստինի արաբական պետության ճանաչման ժամանակ:

Ներկայումս քիչ չէ խոսվում այն մասին, որ ԵՄ-ի, ՆԱՏՕ-ի, Եվրոպական համագործակցության և անվտանգության կազմակերպության և այլոց կողմից հնարավոր է ճանաչվի «ալբանացված» Կոսովոն՝ Բելգրադի կամքին հակառակ: Այդպիսի ճանաչումը կարող է դառնալ կարևոր նախադեպ, բայց ոչ թե իրավական, այլ քաղաքական:

ԱՄՆ-ի կառավարության և ԵՄ-ի որոշ պետությունների կարծիքով, իրավիճակը Կոսովոյում եզակի է և նրա ճանաչումը չպետք է հանդիսանա նախադեպ այլ ինքնահռչակ կազմությունների համար: Եվ Կոսովոյի այդ եզակիությունը հիմնավորելու համար ԱՄՆ-ի պետքարտուղար՝ Կոնդոլիզա Ռայսը նշեց հետևյալ գործոնների համակցությունը, Հարավսլավիայի փլուզման ընդհանուր կոնտեքստը, էթնիկ զտումները և հանցագործությունները Կոսովոյի քաղաքացիական բնակչության հանդեպ ու երկար ժամանակահատված երկրամասի՝ ՄԱԿ-ի ադմինիստրացիայի ղեկավարման տակ գտնվելը:

Պետք է արձանագրել, որ նախ և առաջ նախադեպը միջազգային իրավունքում չի հանդիսանում նորմաստեղծման աղբյուր, այսինքն՝ չի ստեղծում ֆորմալ համակողմանի իրավական նորմ: Եվ երկրորդ, նոր ինքնորոշվող պետությունների ճանաչումը գոյություն ունեւ մաս վաղ ժամանակներում, այդ թվում՝ հակառակ այն պետությունների, որոնցից բաժանվում էին իրենց մասերը: Այսպես, դեռ 1777 թվականին Ֆրանսիան, իսկ հետո նաև 1779-ին Իսպանիան ճանաչեցին Անգլիայից պոկված Ամերիկայի Միացյալ Նահանգները՝ կնքելով նրա հետ առևտրական և քաղաքական պայմանագրեր: Վերջապես ինչ վերաբերում է «Կոսովոյի կազուսին», ապա պետք չէ հաշվից դուրս նետել նաև այն, որ խիստ իրավականորեն փաստացի է երկրամասի ինքնորոշման օրինաչափությունը<sup>15</sup>:

Չճանաչված պետություններին երբեմն փոքր-ինչ քամահրանքով կոչում են ինքնահռչակներ: Բայց չէ որ յուրաքանչյուր պետություն սկզբնապես ինքնահռչակված պետականակերպ կազմավորում է եղել, անգամ եթե այն առաջանում է, «արտաքին» որոշումների արդյունքում (ՄԱԿ-ի Գլ-

խավոր Ասամբլեայի 1947 թվականի բանաձև Իսրայել պետության և Պաղեստինի ստեղծման մասին կամ 1995 թվականի Դեյտոնյան համաձայնագրով՝ Բոսնիայի և Հերցեգովինայի համադաշնության ստեղծումը):

«Չճանաչված», «ինքնահռչակ»... Այս սահմանումների մեջ կան անարդարության որոշ նշույլներ, արհամարհանք «հավանություն չտրվածներին» (որոշ միջազգային կազմակերպությունների կամ գերտերությունների կողմից), բայց միևնույն ժամանակ «ստուգվում» է մի ամբողջ ազգի վառ կերպով արտահայտված և ազատ կամաարտահայտման ձգտումը, որը ցանկանում է ապրել սեփական անկախ պետության մեջ: Առավել ևս, երբ խոսքը գնում է մի պետության մասին, որը գոյություն ունի և հաջող գործում է արդեն երկար ժամանակների ընթացքում:

Ի՛նչպե՞ս պետք է դրսևորի յուրաքանչյուր պետություն չճանաչված պետական կազմավորումների հանդեպ, եթե այն ձգտում է մնալ միջազգային իրավունքի սահմաններում:

Առաջին հերթին դա պետք է բխի այն բանից, որ տվյալ դեպքում նա ունի լիիրավ իրավունք ճանաչել կամ չճանաչել այդ կազմավորմանը: Իրավականորեն՝ ժողովուրդների իրավահավասարության տեսանկյունից դա ոչ միայն իրավունք է, այլև պարտավորություն, սակայն առանց պայմանի պարտավորություն: Պետությունը ինքն է վերլուծում ինքնորոշված նորակազմության պետականության իրական չափորոշիչները, որոշում հիմնավորումները, տեսակները, ճանաչման ձևերը և այլն: Գործնականում դա տեղի է ունենում սեփական շահերը, խնդիրները և իրական քաղաքականության պահանջները հաշվի առնելով:

Եվ երկրորդ, անթույլատրելի է միջամտել ինքնորոշման գործառույթին: Առավել ևս չի կարելի դիմել նոր պետության զավթմանը, իրեն միացմանը և նրա հետ միավորմանը (այդ թվում՝ դաշնության, համադաշնության, ասոցիացիայի, պրոտեկտորատի սահմաններում): Դրա հետ միասին այդ պետությունների հետ միջազգային պայմանագրի կնքումը (չհարձակման, համագործակցության, փոխադարձ օգնության և այլն) չի համարվի միջազգային իրավունքի նորմերի խախտում: Համագործակցությունը մի կողմից և տարածքային ամբողջականությունը՝ մյուս, դրանք բացառապես տարբեր բաներ են:

Ինչ վերաբերում է հատկապես Ռուսաստանին, ապա սկզբնապես նրա կողմից «չճանաչված»

պետություններին ճանաչելը նախընտրելի կլիներ իրականացվել դե ֆակտո ձևով, հնարավոր է, բազմակողմ միջպետական պայմանագրի՝ տնտեսական և առևտրային հարաբերությունների կամ հումանիտար օգնության և այլնի կնքման տեսքով: Ընդհանուր առմամբ ինչպես հստակ սահմանեց ՌԳ-ի նախագահը 2006 թվականի հոկտեմբերի 25-ի հեռուստատեսային իր ելույթում, Ռուսաստանի քաղաքականությունը, մասնավորապես, Աբխազիայի և Հարավային Օսեթիայի նկատմամբ, հիմնվում է երկու կանխադրությունների վրա. առաջին, մենք չենք կարող թույլ տալ արյունահեղություն այդ շրջանում, և երկրորդ, մենք բնավ էլ չենք ձգտում այն բանին, որպեսզի ընդարձակենք մեր տարածքը<sup>16</sup>:

Ռուսաստանի ճանաչելը «չճանաչվածներին» իրապես ներգծվում է այդ քաղաքականության մեջ: Մոսկվայի այդօրինակ մոտեցումը «չճանաչված» պետությունների հանդեպ, բացի ֆորմալ իրավունքից ունի ծանրակշիռ քաղաքական հիմքեր: Նախ և առաջ հարկավոր է ապահովել հումանիտար իրավունքը և բնակչության պահանջը, այդ թվում՝ այնտեղ գգալի թիվ կազմող Ռուսաստանի քաղաքացիություն ունեցող բնակիչների: Բացի դրանից հարկավոր էր թույլ չտալ անկայունություն իր սահմաններին կից և առավել ևս ռազմական գործողություններ ու արյունահեղություն, իսկ դրա համար պահանջվում է համագործակցություն և

շփումներ տվյալ պետության իշխող վարչակարգերի հետ: Այդուհանդերձ այդ կառավարություններն արդեն փաստորեն օրինականացրել են միջազգային ասպարեզում, համենայն դեպս մասամբ ճանաչել են որպես կողմ միջազգային բանակցություններում՝ իրենց կարգավիճակի հարցում:

Ակնհայտ է, որ կայացած ճանաչման ակտը նրան անհապաղ հաջորդող պարագաների ամբողջությամբ կտրուկ սահմանափակում է հնարավոր կանխատեսումների, սցենարների դիապազոնը և փորձագետների գնահատականը: Դեռ երկու տարի առաջ որոշ միջազգայնագետ -իրավաբաններ և քաղաքագետներ մատնացույց էին անում հավանական այլընտրանքային սցենարների մասին՝ լուծելու «կովկասյան հանգույցի» հակասությունը, որտեղ նույնպես հիշատակվում էր Աբխազիայի և Հարավային Օսեթիայի ճանաչման հավանականությունը, սակայն առանց Ռուսաստանի մասնակցության և նրա շահերին հակառակ: Իրադարձությունների սրնթաց զարգացումը՝ կապված Կովկասում «հնգօրյա պատերազմի» հետ, ծայրահեղորեն փոխեցին իրավիճակը՝ խաչ քաշելով նախկին ծրագրերի վրա և միևնույն ժամանակ բացելով «հնարավորությունների պատուհան» նորերի իրականացման, որոնց հավանականությունը դեռ երեկ թվում էր քիչ:

<sup>1</sup> Տե՛ս The Charter of the United Nations, <http://www.un.org/en/documents/charter/>.

<sup>2</sup> Տե՛ս International Covenant on Economic, Social and Cultural Rights, <http://www2.ohchr.org/english/law/cescr.htm>.

<sup>3</sup> Տե՛ս Final Act of the Conference on Security and Cooperation in Europe, [http://www.osce.org/documents/mcs/1975/08/4044\\_en.pdf](http://www.osce.org/documents/mcs/1975/08/4044_en.pdf).

<sup>4</sup> Տե՛ս Новое время. 1992. N 31.

<sup>5</sup> Տե՛ս Российская газета, 14.10.1992.

<sup>6</sup> Տե՛ս Московские новости. N 39. 27.09.2002.

<sup>7</sup> Տե՛ս Ключевский В.И. Сочинения. Т.1. С. 42.

<sup>8</sup> Տե՛ս Старушенко Г.Б. Нация и государство в освобождающихся странах. М.,1967. С.105-106.

<sup>9</sup> Տե՛ս Виген Кочарян. Право на самоопределение в современном международном праве, <http://www.regnum.ru/news/1240480.html>.

<sup>10</sup> Տե՛ս Действующее международное право. Т. 1.-М.: Московский независимый институт международно права. 1996. С.7-33.

<sup>11</sup> Տե՛ս Декларация о принципах международного права, касающихся дружеских отношений и сотрудничества между государствами в соответствии с Уставом ООН. Принята 24.10.1970 Резолюцией 2625(XXV) на 1883-см пленарном заседании Генеральной Ассамблеи ООН.

<sup>12</sup> Տե՛ս Վ. Քնչարյան, Միջազգային իրավունք, Երևան, 2002:

<sup>13</sup> Տե՛ս Резолюции, принятые Генеральной Ассамблей на двадцать пятой сессии. 15 сентября -17 декабря 1970 года. Генеральная Ассамблея.официальные отчеты. Двадцать пятая сессия.-Нью-Йорк: Организация Объединенных Наций. 1971. С.151-155.

<sup>14</sup> Տե՛ս Декларация Ревкома Азербайджана от 30 ноября 1920г. «О признании Нагорного Карабаха, Зангезура и Нахичевани составной частью Армянской ССР». Газ. « Коммунист» (на арм. яз.). Ереван, 7 декабря, 1920 г.

<sup>15</sup> Տե՛ս Действующее международное право. Т. 1.- М.: Московский независимый институт международного права. 1996. С. 65 - 73.

<sup>16</sup> Տե՛ս Вельяминов М. Эволюция принципа самоопределения народов. //Республика Абхазия. N125. 2007. 01-02 ноября.